ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ

2025

## «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության» ծրագիր

**Ծրագրի շրջանակներում 2025 թվականին իրականացվել է ընդհանուր 7200 ժամ դասընթաց: Մասնակիցների թիվը՝ 256 անձ:**

### ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ (ՄՈԴՈՒԼՆԵՐ)

- Front end ծրագրավորում
- Ծրագրավորման հիմունքներ
- Անգլերենով հաղորդակցման հմտություններ
- Ռուսերենով հաղորդակցման հմտություններ
- Ազգագրություն
- Ինքնաճանաչում, անձնային աճ
- Ավտոմեքենայի վերանորոգում
- Կաշեգործություն
- Կահույքագործության հմտություններ
- Եռակցում
- Շինարարական հմտություններ (ծեփագործ, սալիկապատող)
- Շինարարական հմտություններ (ներկարար, լամինապատող)
- Կարուձև
- Զարդակիրառական արվեստ (առանձին նաև օտարերկացիների համար)
- Խեցեգործություն (առանձին նաև օտարերկացիների համար)
- Հաշվապահական հաշվառման հիմունքներ
- Ձեռներեցություն
- Մեղվաբուծություն
- Համակարգչային հմտություններ
- Ընդհանուր հոգեբանություն







### ՀԱՐԱԿԻՑ ՄՈԴՈՒԼՆԵՐ

- Անգլերենով հաղորդակցման հմտություններ
- Հայերենով հաղորդակցման նախնական կարողություններ
- Համակարգչային հմտություններ
- Ազգագրություն
- Ընդհանուր հոգեբանություն
- Հաղորդակցման հմտություններ

## ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 2024-2025 թվականների

### Խմբեր




### Մասնակիցներ








### Դասընթացների տևողությունը, ակադեմիական ժամ




### Դասընթացում ընդգրկված առարկայական ծրագրերի թիվը (մոդուլ)



## ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ

## 2024-2025ԹԹ.-Ի ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

| | 2024 թվականի ցուցանիշներ | | | 2025 թվականի ցուցանիշներ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Տարեկան պլանային ցուցանիշ | Տարեկան փաստացի ցուցանիշ | Տարբերություն | Տարեկան պլանային ցուցանիշ | Տարեկան փաստացի ցուցանիշ | Տարբերություն |
| **Գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերում ընդգրկված իրավախախտում կատարած անձանց թիվը ունկնդիր, այդ թվում** | **135** | **192** | **+57** | **180** | **256** | **+78** |
| **կանայք, տոկոս** | **20** | **14** | -6 | **20** | **11** | -9 |
| **տղամարդիկ, տոկոս** | **80** | **86** | +6 | **80** | **89** | +9 |
| **Դասընթացում ընդգրկված առարկայական ծրագրերի թիվը** | 7 | 7 | 0 | 10 | 22 | +12 |
| **Դասավանդվող մասնագիտական խմբերի թիվը** | 23 | 27 | +4 | 30 | 33 | +3 |
| **Դասընթացների տևողությունը, ակադեմիական ժամ** | 5520 | 5520 | 0 | 7200 | 7200 | 0 |
| **Տարեկան հաստատված ծրագրերին մասնակցած և հավաստագրեր ստացած ունկնդիրների տեսակարար կշիռը մասնակիցների ընդհանուր թվաքանակի մեջ, տոկոս** | 80 | 80 | 0 | 80 | * | * |
| **Իրավախախտում կատարած անձանց վերասոցիալականացման և կրթական ծրագրերով ուսուցման միջին տրողությունը, ամիս** | 11 | 10 | -1 | 11 | 10 | -1 |

*ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

# «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականցում՝ առանց տարիքային սահմանափակման» ծրագիր






# 2024-2025 և 2025-2026 ուսումնական տարիներին դասարանների թիվն ըստ ՔԿՀ-ների




| | 2024-2025 | 2025-2026 |
|---|---|---|
| Գորիս | 2 | 0 |
| Վանաձոր | 2 | 2 |
| Նուբարաշեն | 2 | 2 |
| Սևան | 2 | 3 |
| Աբովյան | 2 | 2 |
| Արթիկ | 2 | 2 |
| Արմավիր | 4 | 3 |

# 2024-2025 և 2025-2026 թվականներին անցկացված միջոցառումներն ըստ ՔԿՀ-ների (բաց դաս, խաղ-վիկտորինա, ցուցահանդես և այլն)




| | Արմավիր | Արթիկ | Աբովյան | Սևան | Նուբարաշեն | Վանաձոր | Գորիս |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2024-2025 սեպտեմբեր-մայիս | 18 | 1 | 7 | 10 | 4 | 10 | 6 |
| 2025-2026 սեպտեմբեր-դեկտեմբեր | 8 | 2 | 2 | 6 | 3 | 5 | 1 |

# 2024-2025 և 2025-2026 թվականներին անցկացված միջոցառումներին մասնակցած դատապարտյալների թիվն ըստ ՔԿՀ-ների (համեմատական)




| | 2024-2025 սեպտեմբեր - հունիս | 2025-2026 սեպտեմբեր - դեկտեմբեր |
|---|---|---|
| Գորիս | 20 | 4 |
| Արթիկ | 22 | 12 |
| Նուբարաշեն | 26 | 15 |
| Աբովյան | 102 | 19 |
| Վանաձոր | 156 | 31 |
| Սևան | 192 | 86 |
| Արմավիր | 288 | 125 |

## 2024 և 2025 թվականներին բաշխված հիմնական կրթության վկայականների և միջնակարգ կրթության ատեստատների քանակական ցուցանիշներ (համեմատական)




| | 2024 | 2025 |
|---|---|---|
| Վկայական | 11 | 6 |
| Ատեստատ | 20 | 11 |

Վկայական Ատեստատ

# «Մինչև 19 տարեկան ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագիր» ծրագիր (2025-2026 ուսումնական տարի)



Ընդամենը
11 սովորող
«Աբովյան» ՔԿՀ
«Նուբարաշեն» ՔԿՀ
1 սովորող
9-րդ դաս.
2 սովորող
10-րդ դաս.
5 սովորող
11-րդ դաս.
2 սովորող
11-րդ դաս
1 սովորող
11-րդ դաս.

# 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԼԱՆԱՅԻՆ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| | |
|---|---|
| 48 | Սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգմանը մասնակցելու համար հավակնորդների ուսուցում |
| 45 | Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) հատուկ ուսուցում |
| 29 | Դատավորների հատուկ ուսուցում |
| 34 | Դատախազների հատուկ ուսուցում |
| 3 | Նոտարի թեկնածուի՝ գործունեության իրականացման հմտությունների ուսուցում |
| 153 | Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության ծառայողների հատուկ ուսուցում |
| 167 | Դատական կարգադրիչների հատուկ ուսուցում |
| 1486 | Քրեակատարողական ծառայության հանրային ծառայողների հատուկ ուսուցում |

# 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԼԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



# Կազմակերպվել է Անչափահասների արդարադատության խորհրդի 3 հերթական նիստ







2025 թվականի ընթացքում Լանզարոտեի կոնվենցիայի, դատական հոգեբանության, շտկող հոգեբուժության (կորեկցիոն հոգեբուժության), նյութերից կախվածության (սուբստանցիոն կախվածության) և երեխաներին առնչվող հարցաքննության հատուկ մեթոդների թեմայով վերապատրաստվել են շուրջ **240** քննիչներ, դատախազներ, հոգեբաններ և սոցիալական աշխատողներ: Մշակվել է անչափահասների, անգործունակ կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մասնակցությամբ հարցաքննությունների ժամանակ հոգեբանների կողմից իրականացվող հարցազրույցների չափորոշիչներն ու մեթոդաբանությունը,նախատեսվում է տպագրել ուսումնական ձեռնարկ:





Իրականացվել է Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարության
«Հոգեբանամանկավարժական կենտրոն»–ի ***32 մասնագետների*** վերապատրաստում՝
ուղղված բռնության և բուլինգի կանխարգելմանը, բացահայտմանը և արձագանքմանը:



Տպագրվել է «Անձնական տվյալների մշակման իրավակարգավորումները ուսումնական հաստատություններում» ձեռնարկը: Դրա հիման վրա Տավուշի մարզում իրականացվել է ***200 ուսուցչի*** վերապատրաստում








Իրականացվել է «Քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի ծառայության աշխատակիցների և հանցագործություն կատարած անձանց կարողությունների զարգացում» ծրագիրը: Վերապատրաստվել է ***32 մասնագետ***՝ (ՔԿՀ, ՊՈԱԿ և Պրոբացիա), ինչպես նաև ***90 դատապարտյալ***:

Մշակվել է գործառնական ձեռնարկ՝ «Գիտակցված ծնողավարումը՝ բռնության կանխարգելման համատեքստում» վերտառությամբ









Կազմակերպվել է «Ծնողավարման հմտություններ» թեմային նվիրված դասընթաց: Ծրագիրն իրականացվել  է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ:
Դասընթացին մասնակցել են քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի ծառայության աշխատակիցներ, հոգեբաններ:
Արդյունքում մշակվել է ուսումնական մոդուլ և ձեռնարկ՝ «Գիտակցված ծնողավարումը բռնության կանխարգելման համատեքստում» վերտառությամբ:








«Ծնողավարման հմտություններ» առանձին դասընթաց իրականացվել է նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում, որն ուղղված էր կին դատապարտյալների ծնողական կարողությունների զարգացմանը՝ նպաստելով ընտանեկան բռնության կանխարգելմանը, երեխաների բարեկեցությանը:
Դասընթացներն իրականացվել են նաև ՀՀ ԱՆ «Սևան «Արմավիր » և «Նուբարաշեն» քրեակատարողականի հիմնարկներում, ինչպես նաև Պրոբացիայի ծառայությունում:





2024-2025թթ.-ին մեկնարկել է «Անչափահասների շրջանում առցանց հանցագործությունների՝ կանխարգելման նպատակով իրազեկման ծրագիրը», որի նպատակն է բարձրացնել երեխաների թվային գրագիտությունն ու պաշտպանվածությունը: Փորձնական փուլը իրականացվել է *Երևանում, Լոռու և Գեղարքունիքի* մարզերում՝ ընդգրկելով ***432 աշակերտի*** և ***27 ուսուցչի***:
Թեմաներն են՝ թվային անվտանգություն, անձնական տվյալների պաշտպանություն, սոցիալական ցանցերում անվտանգ վարքագիծ, կիբեռհարձակումներ և այլն:






«Անչափահասների շրջանում առցանց հանցագործությունների կանխարգելման նպատակով իրազեկման» ծրագրի ամփոփիչ միջոցառումը իրականացվել  է մատենադարանում








Պրոբացիայի ծառայության հետ համատեղ, Անդրանիկ Օզանյանի տուն-թանգարանում անցկացվել է միջոցառում՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան











Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կազմակերպվել է տոնական դաս-միջոցառում՝ կին դատապարտյալների երեխաների և հիմնարկում գտնվող իրավախախտում կատարած անչափահաս անձանց համար







Պրոբացիայի ծառայության Շիրակի և Լոռու մարզային մարմիններում հաշվառված անչափահաս շահառուների հետ իրականացվել է «Ավագ դեռահասների մոտ դրական ինքնագնահատականի զարգացման և ինքնավստահության բարձրացման» թեմայով դասընթաց:

Դասընթացը տեղի է ունեցել «Անձի զարգացում և հաղորդակցման հմտությունների ձևավորում անչափահաս շահառուների շրջանում» վերասոցիալականացման ծրագրի շրջանակում





Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ, կազմակերպվել է «Իրավունք, արդարություն և արդարադատություն» տեսահոլովակների մրցույթ՝ անչափահասների իրավական իրազեկվածությունն ուժեղացնելու նպատակով:
29 դպրոցներից և քոլեջներից շուրջ 100 աշակերտ ներկայացրել են կարճ տեսանյութեր՝ արտահայտելով իրենց պատկերացումներն արդարադատության և մարդու իրավունքների մասին:
Մրցույթի արդյունքում հաղթող 6 մասնակից պարգևատրվել է արդարադատության նախարարի կողմից





Մեկնարկել է «Վերջ բուլինգին» արշավը, ինչը ենթադրում է մասնագետների կարողությունների զարգացում, երեխաների հետ մասնագիտական աշխատանք: Մեկնարկը տրվել է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զատիկ» խնամքի կենտրոնից: Իրականացվել է նաև այցելություն «ՍՕՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի Կոտայքի և Իջևանի մասնաճյուղեր, Աբովյան ՔԿՀ:

Տեսահոլովակի հղումը՝ https://drive.google.com/file/d/1gkHSkglsPIjRCA31btX3wkfrvqSSP2d0/view?usp=sharing












**Գիտահետազոտական և հրատարակչական գործունեության շրջանակներում 2025 թվականին տպագրվել է «Արդարադատություն» գիտական պարբերականի հերթական երկու համար՝ ներառելով ընդհանուր 25-ից ավել գիտական հոդվածներ**



## *«Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության հետագա ամրապնդում» ծրագիր*

**2025թ.-ի ընթացքում Հայաստանում Եվրոպայի խորհրդի աջակցությամբ և ֆինանսավորմամբ՝**

- ✓ *Վերանորոգվել են ՀՀ ԱՆ «Արթիկ», «Սևան» և «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներում արհեստագործական տարածքներ և հիմնադրվել են մետաղապլաստե դուռ պատուհանի և զոդման ուսումնական արտադրամասեր,*
- ✓ *Ձեռք է բերվել մետաղապլաստե դուռ պատուհանի և զոդման համապատասխան հաստոցներ, գործիքներ, սարքավորումներ և նյութեր,*
- ✓ *Իրականացվել է համապատասխան մասնագիտություններով դասընթացներ դատապարտյալների շրջանում:*

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ